նագրումը միմյանց լրացնում և հավաստում են Մշո Տօնականի գրչության ժամանակը։

Բաբերդի[36] ռայիս պատրոն Աստուածատուրը ցանկանում է ունենալ Սողոմոն Մաբենացու կարգավորած Տօնականի ընդօրինակությունը։ «Եւ ապա խնդիր արարեալ յոգնիմաստ գրչի և գտեալ քահանայ մի ի գաւառէն Կարնայ, յորում Վարդան կոչեցեալ, հմուտ և վարժ ամենայն արհեստի գրչութեան և նա յանձին կալեալ և աւգնականութեամբն Աստուծոյ սկիզբն արարեալ զկնի երից ամաց եհաս յաւարտ բանիս»[37]։

Վարդան քահանա Կարնեցին երեք տարում ավարտում է ձեռագիրը։ Այդ ժամանակ Սեբաստիայի սուլթան Ռուքն-էդ-դինը հարձակվում է Կարինի վրա, «եւ ի կատարման գրոցս՝ սուլտանն Սեւաստիոյ ժողով արարեալ անհուն բազմութեամբ... փքացեալ, լեռնացեալ եհաս՝ ի Թէոդուպաւղիս, և անդի կամեցեալ անցանել յաշխարհն Հայոց և Վրաց»[38], բայց ճանապարհին, ջախջախվում է Զաքարիա Սպասալարի կողմից։ Այս դեպքերի արձանագրումը գտնում ենք Ստեփանոս եպիսկոպոսի ժամանակագրության մեջ. «Ի սոյն ամի (ՌԾԱ—1202) Ռուքնադդին սուլտանն էառ զԿարնոյ քաղաք և կոտորեցաւ ի Զաքարիայէն»[39]։ Ուրեմն Վարդան Կարնեցին Տօնականը ավարտել է 1202 թ.։ Այս թվականը հաստատվում է ձեռագրի հետագա ճակատագրի պատմությամբ։

«Եւ յայսմ ամի (իմա՝ 1202 թ.),—շարունակում է հիշատակագիրը,—ի սադրելոյ չարին ըմբոնեցաւ այրս Աստուածատուր ի ձեռն ամիրային իւրոյ Ալադին կոչեցեալ։ Որ և ի ձեռն այնմ գաղանի Աստուածատուրն այն ընկալաւ զվախճան, և յափշտակեցին զըստացուածս նորա և ոչ մնաց և ոչ մի ինչ, բայց այս գիրքս»[40]։

Օգտվելով ստեղծված ծանր դրությունից, Բաբերդի դատավոր բոծորը, որ նշանակում է տաճիկ, «ձեռն յառաջ տարեալ զուր պատճառանաւք բանս ի վերայ եղեալ, թէ հինգ հարիւր պատատ մնաց ինձ առ Աստուածատուրն»։ Կարծեցյալ պարտքի դիմաց ձեռագիրն հափշտակելով՝ «չու արարեալ դատաւորն եկն բնակեցաւ ի հռչակաւոր քաղաքն Խլաթ և Բ ամ կայր ի պահեստի»[41]։

Ձեռագիրը երկու տարի թաքցնելուց հետո, հափշտակողը համոզվելով, որ ձեռագիրը չի հետապնդվում (որովհետև ձեռագրի ստացող պատրոն Աստուածատուրի տոհմը տուժել էր ոչ միայն Ալադինի վայրագություններից, այլև վերահաս սովից)[42], այն վաճառքի է հանում։

Խլաթին մերձ Դանջան գյուղացի Ստեփաննոս, Վարդապետ և Հովհաննես քահանա եղբայրները, որոնք միաբանած էին Մշո Առաքելոց ուխտին, այդ մասին լուր են ուղարկում Առաքելոց վանք։ Եպիսկոպոսապետ Եսային՝ չորս քահանաներով «փոյթ ընդ փոյթ գնաց ի Խլաթ», և որովհետև «ոչ կարաց հա-

36 «Թերևս ոչ Բաբերդ քաղաքն՝ այլ գիւղ մի», գրում է Ղ. Ալիշանը (Հայապատում, էջ 448, ծթ. 3)։ Բայց ձեռագիրը հափշտակողին հիշատակագիրը «դատաւոր քաղաքին» է կոչում, որ հասկացվում է դատավորն այն քաղաքի (Բաբերդի), ուր տեղի էին ունենում նկարագրված իրադարձությունները։

37 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 602ա, 602բ։ Հմմտ. Յիշատակարանք, Ա, էջ 712։

38 Անդ։

39 Մանր ժամանակագրություններ, կազմեց Վ. Հակոբյան, հտ. Ա, Երևան, 1951, էջ 37։

40 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 602բ։ Հմմտ. Յիշատակարանք, Ա, էջ 712։

41 Անդ, էջ 602բ։

42 «ՈԾԲ (1203) թուականին... Սով եղեալ ի վերայ երկրի»,—կարդում ենք Բաբերդի մոտ օրինակված մի ձեռագրում (Յիշատակարանք, Ա, էջ 1031)։